ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-6-4-Ա

ք. Երևան 14.08.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի օգոստոսի 14-ի նիստում քննարկեց 2024 թվականի փետրվարի 26-ին արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված Hermes Arzneimittel GmbH ընկերության (Georg-Kalb-Straße 5-8 82049 Pullach,DE) «HERMES ARZNEIMITTEL» (IR1639781) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Միջազգային գրանցման մասին ծանուցման մեջ նշված՝ 5-րդ և 40-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «HERMES» ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան վերոհիշյալ դասերի ապրանքների և ծառայությունների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «HERMES» (HERMES INTERNATIONAL 24 rue du Faubourg Saint-Honoré F-75008 PARIS (FR) IR 426866, 429732, 463962) շփոթելու աստիճան նման բառային և համակցված ապրանքային նշանների առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 115-րդ, 130-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները և ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում նման տարր է հանդիսանում «HERMES» բառը, որն ամբողջությամբ ներառված է հայտարկված համակցված ապրանքային նշանի մեջ և

հանդիսանում է հիմնական ընկալման տարրը: Ապրանքային նշանների նմանության առավել ընդհանուր չափանիշը տնտեսական շրջանառության ընթացքում սպառողի կողմից դրանք շփոթելու հնարավորությունն է: Նշանի նմանությունը որոշելիս հաշվի է առնվում, որ սպառողը, որպես կանոն, հնարավորություն չունի համեմատելու երկու նշանները, այլ առաջնորդվում է նախկինում տեսած նշանի մասին ունեցած ընդհանուր տպավորությամբ:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հայտատուն ներկայացրել է նամակ համաձայնագիր հակադրվող ապրանքային նշանների իրավատիրոջ կողմից:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «HERMES ARZNEIMITTEL» (IR1639781) ապրանքային նշանը գրանցել «ARZNEIMITTEL» տարրին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ